



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրաշեն համայնք

ՀՀ Արմավիրի մարզ գ. Ջրաշեն, հեռ. 094 32 22 38 098 98 05 06 jrashen.armavir@mta.gov.am

30 հոկտեմբերի 2020 թ.

Թիվ 197

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ն. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ Ն. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ի լրումն համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 193 գրության Ձեզ է ներկայացվում համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 09 արտահերթ նիստի N 34-Ն որոշման ուղղված տարբերակը:

[Faint signature]

Համայնքի ղեկավար



Լ. Վարդանյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
Մտնո թիվ Դ-25602-2020
30 12 2020



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ

<<25>> դեկտեմբերի 2020թ.
Զրաշեն համայնք

N 34 -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ և 32-րդ, 33-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության Նախարարության 22.12.2020 թվականի թիվ՝ 27.3/29020-2020 պետական փորձագիտական եզրակացությունը.

Ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրաշեն համայնքի 2021 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

1) Եկամտային մասով 22455,0 հազար դրամ,

2) ծախսերի մասով՝ 22455,0 հազար դրամ:

Այդ թվում հաստատել՝

1.1) Համայնքի բյուջե եկամուտները, հատված 1

1.2) Համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգմամբ, հատված 2

1.3) Համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հատվածը 3:

1.4) Համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/ հատված 4:

1.5) Համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ հատված 5:

1.6) Համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ հատված 6:

2. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:

3. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 15.տոկոսը:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Ա. Շահմուրադյան	/ <i>Շահմուրադյան</i> /	/	/
2. Վ. Մատաղջանյան	/ <i>Մատաղջանյան</i> /	/	/
3. Ռ. Հակոբյան	/ <i>Հակոբյան</i> /	/	/

Համայնքի ղեկավար



Լ. Վարդանյան
2020թ դեկտեմբերի 25
Ջրաշեն համայնք



Հանված
Արմավիրի մարզի Ջրաշեն
համայնքի ավագանու 2020 թվականի
դեկտեմբերի 25-ի N 34-Ն որոշման

Հաստատել Արմավիրի մարզի Ջրաշեն համայնքի 2021 թվականի բյուջեն 22455,0 հազար դրամով:

1. Եկամտային մասով 22455,0 հազար դրամ:
2. Ծախսային մասով 22455,0 հազար դրամ:
3. Բյուջեի հատված 1,2,3,6-ը 22455,0 հազար դրամ:
4. Բյուջեի հատված 4-ը և 5-ը:

Թույլատրել ֆինանսական բաժնին տարվա ընթացքում կարիք առաջանալու դեպքում համայնքապետի որոշմամբ կատարել հոդվածային փոփոխություններ, համայնքի 2021 թվականի բյուջեի 15 տոկոսի չափով:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

0010, Վազգեն Սարգսյան 3/8, հեռ. 594015

Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

№ 24.3/24020-Ն
ՁԲ 12 2020թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Լ.ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Վարդանյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 175 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Զրաշեն համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

12/22/2020

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրաշեն համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ջրաշեն համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 6-րդ հոդվածին հղում կատարելու անհրաժեշտություն չկա:

2. Նախագծի 1-ին կետում նշված հավելվածը բացակայում է:

3. Նախագծի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերում նշված հատված 1-ը, հատված 2-ը, հատված 3-ը, հատված 4-ը, հատված 5-ը, հատված 6-ը և հատված 7-ն անհրաժեշտ է ձևակերպել հավելվածների տեսքով:

4. Նախագծի 10-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ ակտի գործողության ժամկետն անհրաժեշտ է նախատեսել 2021 թվականի հունվարի 1-ից:

5. Հարկ ենք համարում նշել նաև, որ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի բովանդակությունից պարզ է դառնում, որ համայնքի բյուջեի նախագիծը բաղկացած է համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից և համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից: Ուստի, տվյալ դեպքում Նախագծին կից անհրաժեշտ է ներկայացնել նաև բյուջետային ուղերձը:

**Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝**



Արդարադատության
Նախարարություն

12/22/2020

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ